ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման նիստի ամփոփման մասին)

10.05.2018թ.
Ժամը՝ 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պոռզյան

Անդամներ՝ Ս. Աբրահամյան

Ա. Սեդրակյան

Գ. Ղազարյան

Լ. Մովսեսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ.Պողոսյան*

1. «ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի կարիքների համար «Տարեցների հանրապետական խաղերի անցկացում» մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2018 թվականի մայիսի 10-ին, ժամը 11:00-ին:

«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին քարտուղարի կողմից տրամադրվեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եղրակացությունն այն մասին, որ նշված ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դաշա» ՍՊԸ–ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի: Ներկայացվեցին նաև գնահատող հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկները:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 «Դաշա » ՍՊԸ –ին ճանաչել հաղթող:

2.2 Հաստատել «Դաշա» ՍՊԸ-ի հետ «ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև _5_-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

նախագահ՝ ---------- Ս. Պռազյան

Անդամներ՝ ---------- Ս. Աբրահամյան

---------- Ա. Սեդրակյան

---------- Գ. Ղազարյան

---------- Լ. Մովսեսյան

Հանձնաժողովի
քարտուղար՝ ---------- Մ. Պողոսյան